ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ս. Ուզունյան

«31» օգոստոսի 2023թ.

Երևանի Լ. Տոլստոյի անվան հ.128 հիմնական դպրոց

Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

IX^{Բ} դասարան

Դասղեկ՝ Ա. Ալեքսանյան

«2023- 2024 թթ» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(դասարանի ընդհանուր բնութագիրը)

IX^{բ} դասարանում սովորում է 21՝ աշակերտ՝ 11 աղջիկ, 10 տղա: Աշակերտները շատ պարտաճանաչ են, դասարանում տիրում է ջերմ մթնոլորտ: Աշակերտները ցուցաբերում են իրենց կարողություններին և հմտություններին համապատասխան առաջադիմություն: Դասարանի աշակերտները համախմբված են և համերաշխ: Ձևավորվել է սովորողների միասնական կոլեկտիվ:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկզբին

1. Գրանցվել և լրացնել էլ մատյանը /սեպտեմբեր, 1-ին, 2-րդ շաբաթ/:
2. Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:
3. Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության հաստատություններում մասնակցության մասին:
4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան:

Ամենօրյա աշխատանք

1. Դասամատյանում նշել բացակայությունները:
2. Հետևել կարգապահությանը:
3. Հետևել հերթապահությանը դասարանում:

Ամենշաբաթյա աշխատանք

1. Ստուգել աշակերտների օրագրերը:
2. Վերահսկել դասամատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից:
3. Անցկացնել դասղեկական ժամեր:
4. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ:

Ամենամսյա աշխատանքներ

1. Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին:
2. Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը:
3. Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում:
4. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթացը: Հետևել աշակերտների հաճախելիությանը: Առաջադիմության բարձրացման ուղղությամբ՝ աշխատել առարկայական ուսուցիչների հետ, պարբերաբար ստուգել, վերլուծել ընթացիկ և վերջնական գնահատականները: Սովորողների և մանկավարժների միջև ձևավորել բարյացկամ, ներդաշնակ փոխհարաբերություններ: Հետևել դասարանի կարգ ու կանոնին, սանիտարահիգենիկ վիճակին: Յուրաքանչյուր աշակերտի նկատմամամբ ցուցաբերել անհատական մոտեցում, որպեսզի զերծ մնան հնարավոր սխալներից: Ձևավորել պատասխանատվության, փոխօգնության, համագործակցությանոգի,սովորողների մեջ ստեղծել արդյունավետ հարաբերությունների համակարգ: Խթանել կոլեկտիվ ստեղծագործական գործունեության ձևավորմանը, ինչպես կրթական գործունեության մեջ, այնպես էլ դրանից դուրս: Աշակերտների մոտ ձևավորել արժեքային համակարգ:

Կազմակերպել դասարանական ժողովներ, կազմակերպել կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ, կազմակերպել այցելություններ թատրոն, թանգարան...կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ:

Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, ծանոթանալ երեխաների սոցիալական պայմաններին:

Հոգևոր դաստիարակություն

Դասղեկի ժամերին անցկացնել զրույց զեկուցումներ քրիստոնեական պատմություններից :

Խորացնել գիտելիքները կրոնական ծեսերի մասին: Զրույց կրոնական ծեսերի և աղանդների մասին: Այցելել եկեղեցիներ:

Դասղեկի ժամերին կարդալ ուսուցողական պատմություններ:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Այցելել պատկերասրահներ և մշակութային օջախներ: Կազմակերպել էքսկուրսիաներ: Դասարանը կահավորել ճաշակով և նպատակային:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, քաջություն, կամքի ուժ: Ծանոթացնել հայ ժողովրդի անցած ուղուն՝ նրա փառավոր էջերին և հերոսներին: Սեր արթնացնել հայրենիքի նկատմամբ:

Ֆիզիկական դաստիարակություն

Զնավորել առողջ ապրելակերպի վարքագիծ: Կեցվածքի ձևավորման համար ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել աշակերտի ճիշտ նստելաձևը և կեցվածքը: Անընդհատ անցկացնել ընդհանուր զարգացնող վարժություններ, ֆիզկուլտդադարներ:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն, ընդգրկել սանիտարահիգենիկ աշխատանքներին: Հետևել դասասենյակի մաքրությանը: Սահմանել հերթապահություն:

Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտներին իրազեկել էկոլոգիայի, բնապահպանության անհրաժեշտությունը: Դրա պահպանության համար յուրաքանչյուրի մասնակցության կարևորությունը:

Դպրոց-ընտանիք կապը

Ապահովել աշակերտ – ծնող – դպրոց կապը: Ծնողներին ներգրավել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին և աշխատանքներին:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը
(I կիսամյակ)

Ուսումնական շաբաթը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
Սեպտեմբեր			
	Գիտելիքի ուժը	01.09.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
1-րդ շաբաթ	Սովորողների իրավունքներն ու պարտականությունները	08.09.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
2-րդ շաբաթ	Բազմազանությունն ու հանդուրժողականությունը մեր շրջապատում	15.09.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
3-րդ շաբաթ	Ազատ, անկախ Հայաստան	22.09.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
4-րդ շաբաթ	Հերոս տղերքը մեր...	29.09.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
Հոկտեմբեր			
5-րդ շաբաթ	Շնորհավո՛ր տոնդ, ուսուցի՛չ	06.10.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
6-րդ շաբաթ	Կարվելակերպի ձևերը կոնֆլիկտային իրավիճակներում	13.10.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
7-րդ շաբաթ	Ես և ուրիշները	20.10.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ

Նոյեմբեր			
8-րդ շաբաթ	Բոլորս տարբեր ենք, բայց ապրում ենք միասին	03.11.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
9-րդ շաբաթ	Լինենք պաշտպանված բոլոր տեսակի բռնություններից՝	10.11.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
10-րդ շաբաթ	Տարվա ամենագեղեցիկ եղանակը	17.11.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
11-րդ շաբաթ	Ի՞նչը կարող է միավորել դասընկերներին	24.11.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
Դեկտեմբեր			
12-րդ շաբաթ	Հրաշքներով լի ձմեռ	01.12.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
13-րդ շաբաթ	Արդյոք մի՞շտ է ուժեղը ճշմարիտ	08.12.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
14-րդ շաբաթ	Վերաբերմունքը սեփական անձի, շրջապատի մարդկանց նկատմամբ	15.12.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ
15-րդ շաբաթ	Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: Միմյանց ասենք ջերմ խոսքեր	22.12.23թ.	Ուսուցիչ, աշակերտներ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը
(II կիսամյակ)

Ուսումնական շաբաթը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
Հունվար			
1-ին շաբաթ	Նախասիրությունների բացահայտում	12.01.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
2-րդ շաբաթ	Աշխատանքը բարիք է բերում	19.01.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
3-րդ շաբաթ	Հայոց բանակի հզոր արծիվները	26.01.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
Փետրվար			
4-րդ շաբաթ	Համակարգչի կարևորությունը և վնասները	02.02.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
5-րդ շաբաթ	Ցանցային անվտանգություն	09.02.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
6-րդ շաբաթ	Գրից մինչև գիրք և տպագրություն	16.02.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
7-րդ շաբաթ	Երկու հանճարներ	23.02.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
Մարտ			
8-րդ շաբաթ	Գարնան զարթոնքն իմ հոգում	01.03.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
9-րդ շաբաթ	Շնորհավո՛ր, սիրելի՛ կանայք և աղջիկներ	08.03.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
10-րդ շաբաթ	Սպորտն իմ կյանքում	15.03.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
11-րդ շաբաթ	Ուզում եմ, պետք է, կարող եմ	22.03.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ

Ապրիլ			
12-րդ շաբաթ	Մաքուր պահենք մեր շրջապատը	05.04.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
13-րդ շաբաթ	Ուրիշի հետ վարվիր այնպես, ինչպես կուզես քեզ հետ վարվեն	12.04.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
14-րդ շաբաթ	Երբ մի օր...	19.04.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
15-րդ շաբաթ	Արյունոտ Եղեռն	26.04.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
Մայիս			
16-րդ շաբաթ	Հաղթանակների ամիս	03.05.24թ.	Ուսուցիչ, աշակերտներ
17-րդ շաբաթ	Հայոց արքաներ	10.05.24թ	Ուսուցիչ, աշակերտներ
18-րդ շաբաթ	Մեր կանաչ մոլորակը	17.05.24թ	Ուսուցիչ, աշակերտներ
19-րդ շաբաթ	Ի՞նչ տվեց մեզ 2023-2024 ուստարին	24.05.24թ	Ուսուցիչ, աշակերտներ